

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**  
**Ապրանքի ծագման տեղանուններ**

<b>Գրանցման համար</b>	11
<b>Հայտի համար</b>	2014006
<b>Հայտի ներկայացման թվականը</b>	29.05.2014
<b>Հայտատուն (հայտատուները)</b>	“Գինու ազգային գործակալություն” հանրային իրավունքի իրավաբանական անձ, GE “NATIONAL WINE AGENCY” LEGAL ENTITY UNDER PUBLIC RIGHTS, GE
<b>Ծագման երկիրը</b>	GE
<b>Հայտարկվող տեղանունը</b>	ՄՈՒԿՈՒԶԱՆԻ, МУКУЗАНИ, MUKUZANI, <b>ՅՄՅՄՅՆԻ</b>

**ԱԾՄԴ-ի դասը** 33  
**Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը** գինի  
**Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝**

«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» ծագման տեղանվամբ վերահսկվող բարձրորակ կարմիր չոր գինի:  
«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» գինին բնութագրվում է նոնագույն երանգով, համը՝ հագեցած, ներդաշնակ, թավշային, նուրբ, արտահայտված յուրահատուկ բույրով և ծաղկեփնջով, բարձր մզվածքային:  
«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» գինու քիմիական տվյալները պետք է համապատասխանեն հետևյալ ցուցանիշներին.

սպիրտի ծավալային պարունակությունը՝ 10,5-12,5%  
շաքարի զանգվածային խտությունը՝ 3գ/դմ<sup>3</sup> ոչ ավել  
տիտրվող թթվությունը՝ 5,0-7,5 գ/դմ<sup>3</sup>  
ցնդող թթուներ՝ 1,2գ/դմ<sup>3</sup> ոչ ավել  
էքստրակտի զանգվածի բերված խտությունը՝ 20 գ/դմ<sup>3</sup> ոչ պակաս  
ընդհանուր ծծմբի երկօքսիդի զանգվածային խտությունը՝ 160 մգ/դմ<sup>3</sup> ոչ ավել  
ազատ ծծմբի երկօքսիդի խտությունը՝ 30 մգ/դմ<sup>3</sup> ոչ ավել:

**Կապն աշխարհագրական ծագման հետ՝ ծագման տեղանվան կամ աշխարհագրական նշման դեպքում՝**

Մուկուզանի միկրոշրջանում հումքային բազայի տարածքները կազմում են մոտ 246 հա:  
Սպասվելիք բերքը միկրոշրջանում՝ միջինում սպասվում է 1600 տոննա, 1 տոննայից 65 դեկալիտր ստանալու դեպքում կարելի է ստանալ 104000 դեկալիտր գինենյութ:

«ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» – աշխարհագրական դիրքը՝ Յիվ-գոմբորյան լեռնաշղթայի հյուսիս – արևելյան լանջ:  
Միկրոկլիման, ստեղծված օդի սառը հոսանքներով՝ ցած իջած սառույցով պատած Կասկասիոնի գագաթներից:  
Կարբոնատային և յոսային կավի, քարա-ավազային, ալյուվիալ ծածկույթներ, «Սապերավի» տեսակի էկոհարմարվողականությունը բնորոշում է «ՄՈՒԿՈՒԶԱՆԻ» գինու եզակի հատկությունները:

**Աշխարհագրական գոտին՝** խաղողագործության յուրահատուկ տարածք է, որը գտնվում է Արևելյան Վրաստանի Շիդա Կախեթիում կիրճի աջ լանջին Ալազանի գետի Գուրջաանի շրջանում ուղղված լայնությամբ, Յիվ-Գոմբորյան լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջին 41°48' հյուսիսային լայնության և 45°44' արևելյան երկարության կոորդինատներով, 350-750 մ ծովի մակերևույթից բարձր: Հումքի բազան լիովին ներառում է Դեդոպլիս Զվարի տարածքները, Պապրի, Դամանարչենի, Նադարբազկի հովիտները, Զագասանի, Մուկուզանի գյուղերը, Զումլակի, Վելիցղիխե և Վազիբուանի տարածքների մասը: Այստեղ ռելիեֆի կազմությունը ներկայացված է թույլ թեքությամբ լանջերով, որոնք համարյա հարթության հասնող բլրոտ և ալիքներով տեղանքներ են: